

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . . 12 ֆր.

Վեցամսեայ . . . 6 ֆր.

ԱՐՏԱՍԱՀԱՍԱՆ

Երկու քիւ մէկ ծրարով

Տարեկան . . . 14 ֆր.

Վեցամսեայ . . . 7 ֆր.


ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60

Վեցամսեայ 1. 50 ծրար

Կ Ա Ն Ի Կ

Ծանոցման ստոր
20 սանիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՅՆՆ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱՍ

Հ Ա Ս Յ Է

Redaction du journal

le vourk

VARNA (Bulgaria)

Редация

Наѣвстникъ

Игравникъ

ВАРНА

Գրութունք կու լին
սրտնիր

ԼՐՁՈՐԵՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ներկայ ռուս և ճարտարական պատերազմէն յետոյ համաժողովի մը գումարումով շատ մը առկախ խնդիրներու հետ հայկականին ալ կարգադրութեան յոյսը ներշնչած են կաթողիկոսական պատուիրակութեան . որուն մէկ անդամը՝ Ալվատեան սրբազան, Աղէքսանդրիոյ եկեղեցւոյն մէջ խօսած իր քարոզին մէջ ըսած է թէ թէ և կարող չեղանք անմիջական յաջողութիւն մը ձեռք ձգելու, սակայն ամէն տեղ մեզ վստահացնին թէ՛ մենք իրաւունք ունինք արդարութիւն, խաղաղութիւն և ազատութիւն պահանջելու և թէ պատերազմէն յետոյ գումարումովք համաժողովին ուրիշ ազգերու խնդիրներուն հետ մեր խնդիրն ալ սեղանի վրայ կը դրուի և կը լուծուի . Պատուիրակ սրբազանը այդ յուսադրումին հետ սա խորատուն ալ հայ ժողովուրդին ուղղել անհրաժեշտ դատեր է . «Արդ , աշխատինք լրջօրէն ու քաղաքագիտօրէն գործելու որ պէտքի առիթը ներկայանալուն պէս իրաւունք ունենանք մեր պահանջները ներկայացնելու : Սպասելով հանգերձ աշխատինք զարգանալու և յառաջագիտելու քաջ ըլլանք . գիտութիւնը մեզ առաջնորդ և ճարտար մեզ օրինակ առնենք :

Սրբազանի այս խրատականին իմաստը շատ մեկին ու բացորոշ ըլլալով, զայն ընդլայնելու պէտք չենք տեսնել . միայն հարկ կը համարենք « աշխատինք յրջօրէն և քաղաքագիտօրէն գործելու » խօսքը ստորագծել , անուղղայ և արկածախնդիր պոռոտախօսներուն սանձումը ապահովելու և անտարբեր մեծամասնութեան « աշխատելու ու պատրաստուելու » անհրաժեշտութիւնը անգամ մը ևս շեշտելու համար :

Այս «անտարբեր» բառին դէմ ամէն հայ կը բողոքէ, ոչ ոք չընդունիր անտարբեր նկատուիլ . աւենաանտարբեր իսկ չէ՝ զորքի դիմակին տակ կծկուած կապրի ի հարկին իր չէզօքութիւնըն ալ արդարացնելու համար քննադատի հովեր առնելով : Սխալ կամ գէշի չարն գործունէութիւնը քննադատելու իրաւունքը ոչ մէկ հայէ չէ կարելի խել , երբ ան գոնէ իր հասկըցած եղանակաւ զահողութիւնէ չը փախչի . իսկ հայութեան այն ստուար մասը՝ որ իր չէզօքութիւնը արդարացնելու կամ իր անտարբերութիւնը պարտըկելու համար միայն քննադատի հովեր կառնէ , ստեպ բոլորովին անտանելի կը դառնայ դործնական հողին վրայ զոհաբերութեամբ ուրբուրդ կաշմակերպութիւններուն և ասոնց մէն մի անդամին :

Այո՛ , «լրջօրէն» քաղաքագիտօրէն» գործելու ժամը վաղուց հասած է , և արդէն ուշ իսկ մընացած ենք պատրաստ գտնուելու համար այն հազուադէպ առիթին որ թերեւս այս անգամ հայուն ճակատագիրը պիտի վճռէ : Վերջին ռուսութեւրք պատերազմի առնէ մեր անպատրաստ գտնուիլը մեր գերութեան տարիները երկարեց և անհամար ու անփոխարինելի զոհեր խել մեզմէ . նոյն աստիճան անպատրաստութիւն եթէ այս անգամ ալ ցոյց տանք , թերեւս մեր ազգային դոյութիւնը իսպառ վտանգուի : Ուստի ամէն հայու վրայ անխուսափելի պարտականութիւն կը ծանրանայ իր ուժերը տանիլ կցելու սուրբ Դատին պաշտպանութեան համար յրջօրէն ու քաղաքագիտօրէն ձեռնարկուած Գործին , զգուշանալով միշտ յիմար ձեռնարկներու քաջալերող ըլլալէ :



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊՈՒԼԿԱՐԻԱ ԵՒ ՄԱԿԵՂՈՒՆԻԱ

Դ.

(Շար. Խախտող քիսէն և վերջ)

Ահա այս է մեր պահանջաւոր բնական է ուրիշն որ մենք ուրախութեամբ ընդունէինք պետութեանց փորձերը Մակեդոնիոյ մէջ կայուն ու կանոնաւոր վարչութիւն մը հաստատելու , ստանց այս կամ այն ցեղը նպաստաւորելու : Սէլանիկի Փրահսական ընդհ. հիւպատոս Տ. Սթենկի ծրագիրը պարունակող գիդին Գիրքը Բարիքի մէջ հրատարակուելուն պէս, Պուլկարիա ապաստանող Մակեդոնացիները շնորհաւորութեան քաղաքներ հետագիտներ ուղղեցին Տ. Տէլքասէին : 1903 փետրուար 3 ին , իմ կառավարութեան հրամանով , արտաքին գործերու Տ. Նախարարին յայտնեցի Պուլկարիա երախտագիտութիւնը գիդին Գիրքին մէջ արտայայտուած տեսութիւններու մասին (գ. գիրք թ 2) : Միեւնոյն օրը նստեալ Տ. Տէլքասէի Թիւրքի ֆրանսական հիւպատոսը, Օրսէյ կուղղէր հետեւեալ հետագիրը : «Ինչսանապետութեան լրագրաց մէջ հրատարակուած ու մեկնաբանուած գիդին Գիրքին քաղաքները բուն գոհունակութիւն մը պատճառեցին Պուլկարիա եւ ու մանաւանդ Մակեդոնացիներուն » (գ. Գիրք թիւ 3) Այս մասին մենք համաձայն ենք սահմանադրին այս և թէ այն կողմը :

Այդ բարեկարգման ծրագիրին դէմ մէկ կողմէ միայն հակառակութիւն յայտնուեցաւ (Թուրքիոյ հակառակութիւնէն զատ) . և այդ Սթենկէի առաջ եկաւ : Յոյն մամուլը ամենագէշ յարձակումներ ըրաւ Պրահսայի դէմ և անարգեց Տ. Սթենկը : Յունաստանի արտաքին գործոց նախարարը պաշտօնապէս իր դժգոհութիւնը յայտնեց Պրահսայի գեղպան կոմս ա'Օմէլոնի—գեղպանութիւն անհասկանալի , ինչպէս որ Տ. Տէլքասէն քանի մը օր յետոյ կը գրէր . «Պրահսան ոչ ոքի համար միանշանոր՝ չը պահանջեց , այլ միայն ամէնի համար տանելի վիճակ մը » (գիդին Գիրք թիւ 9) Այս հաւատարմութիւնն է որ անհանգիստ կընէ Յոյները որոնք օսմանեան կողմակցութեան վարժուած են : Այս «տանելի վիճակն » է ճիշդ որ կը մերժէին Պուլկարիա եւ ու մար պէտք է հաւատալ , երբ Յոյները կը յայտարարեն թէ իրենք

բարեկարգման կոտակեց են : Միեւնոյն Բարիքի յոյն գաղթականութեան ամենանշանաւոր մէկ անդամը յայտնի կընէ թէ ինչու չը բազմաւ բարենորոգումները գործադրուած տեսնելու հետք իրենց հակառակութիւնը աւելի սա վախով կը յայտնեն թէ Մակեդոնիան բարեկարգուելով ու ինքնավար ըլլալով մի գոյց բոլորովին պուլկարիայ : Բայց անոնց այդ վախը մեզի աւելի պատիւ կը բերէ : Եւ եթէ վստահ են , իրենց ըսածին նման , թէ իրենք գիտակցութիւն ունին մեր վրայ թէ՛ թիւլութիւն , հարստութեամբ և թէ՛ դատարարութեամբ , ինչպէս կրնան այդ տեսակ իրական երկիրը մը ունենալ և կռակով այդ տեսակէտով այն միջակիցներէն զորս այնչափ տկար կը համարեն :

Ես կը բաւականա՛մ այս հարցումը ընել առ նց անոր պատասխանը տալու : Կաւեցնեմ թէ եթէ Յոյները այդ երկիրը կը կրնան , եթէ անոնք բարեկարգմանը կը հաւատան և եթէ անոնց այդ հաւատքը անկեղծ է , առանց վերապահութեան զայն՝ կը շնորհաւորեմ : Որովհետեւ անոր և միայն անոր շնորհիւ կարելի պիտի ըլլայ Յոյներուն և Պուլկարիա եւ ու մանաւանդ Մակեդոնացիներուն մէջ համաձայնութիւն մը պատրաստել , որուն մենք մեր մասին հակառակորդներ ըլլալէ հետք ենք . . . :

Ասոնք այն միեւնոյն գաղափարներն են զորս ես միշտ երկարեցած եմ ձեր (Փրահսական) կառավարութեան բարեացակամ արդարադատութեանը : Չանոնք կը յանձնեմ վստահութեամբ նաեւ Փրահսական կարծիքին անկողմնակալ քննութեանը :

ԹԱՆԻ հաղորդող
Ժորժ Վիլիէ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

[«Նայէ Թրայէ փրէս»էն առնելու]

Ինչեւի՛ր և Զոմէլի խոզտութիւնները՝ սա վերջի օրերս Բաքուի մէջ տեղի ունեցածներէն շատ ու շատ ես կը մնամ :

Արդէն հոս պատահածը յիշատախմացաք հետաքրքրեցին : Այնքան սարսափելի այնքան զաւանթիւրեցին անգուժ քան մըն էր որ իրողութիւնը ամէն նկարագրութիւն կը հեղնէ , Հազարէն աւելի մարդիկ կոտորուեցան , գնդակա՛ծար ըլլալով , դաշունահար ըլլալով ողջ ողջ այրելով . ամենավայրագօրէն հաշմու՛կ

